ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 22.10.2025թ. N 355/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.11.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Լ.Ղազարյանը, Է.Գալյանը, Գ.Շահինյանը, Ս.Հարությունյանը, Մ.Դուրգարյանը, Ջ.Բաբայանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Ղարիբջանյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. Արման Ադամյան ԱՁ-ն (huga2222)
2.«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն (ք. Երևան, Զ.Սարկավագի-157)
3.«Վան-97» ՍՊԸ-ն (ք. Գյումրի, Խ.Հայրիկի-19/1)
4.«Զենիտ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Խուդյակով փող., տուն 35/1)
5.«Կոտայքկոշ» ԲԲԸ-ն (ք. Աբովյան, փող.5, շինություն-13)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ապրանքի անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			նախահաշվային ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	Արման Ադամյան ԱՁ	Վերնաշապիկներ-1	12 000	20%	14 400	**33 709 500**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		28 091 250	20%	33 709 500	
1	2	Արման Ադամյան ԱՁ	Վերնաշապիկներ-2	13 500	20%	16 200	**33 709 500**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		28 091 250	20%	33 709 500	
1	3	Արման Ադամյան ԱՁ	Վերնաշապիկներ-3	12 000	20%	14 400	**29 219 440**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		24 345 750	20%	29 214 900	

1	4	Արման Ադամյան ԱՁ	Տաբատներ-1	15 000	20%	18 000	**36 115 200**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		30 096 000	20%	36 115 200	
1	5	Արման Ադամյան ԱՁ	Տաբատներ-2	15 000	20%	18 000	**40 629 600**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		33 858 000	20%	40 629 600	
1	6	Արման Ադամյան ԱՁ	Պոլո շապիկներ	6 000	20%	7 200	**31 471 280**
2		«Վան-97» ՍՊԸ		26 080 000	20%	31 296 000	
3		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		26 218 500	20%	31 462 200	
1	7	Արման Ադամյան ԱՁ	Տաբատներ-3	18 000	20%	21 600	**59 875 200**
2		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		49 896 000	20%	59 875 200	
1	8	Արման Ադամյան ԱՁ	Ամենօրյա կոշկեղեն	22 000	20%	26 400	**34 749 000**
2		«ԶԵՆԻՏ» ՍՊԸ		28 957 500	20%	34 749 000	
3		«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ		28 957 500	20%	34 749 000	
4		«Կոտայքկոշ» ԲԲԸ		34 700 000	20%	41 640 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղը զբաղեցրած Արման Ադամյան ԱՁ-ն հայտով ներկայացված դիմում-հայտարարություն՝ հավելված 1-ում սխալ է նշել գնման ընթացակարգի ծածկագիրը և հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

-Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոման 40-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Արման Ադամյան ԱՁ-ի հայտը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով մերժել, քանի որ բացակայում է հայտի ապահովումը:
2. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:
3. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած և սահմանել անգործության ժամկետ՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 7, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Ղարիբջանյան

Անդամներ՝ Լ.Ղազարյան

Է.Գալյան

Գ.Շահինյան

Ս.Հարությունյան

Մ.Դուրգարյան

Ջ.Բաբայան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան